Արձանագրություն N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/10-02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «28» հուլիսի 2016թ.
Ժամը՝ 10:00

հանձնաժողովի նախագահ՝

Հարություն Դավթյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Դատական կարգադրիչների ծառայության պետի տեղակալ,

հանձնաժողովի անդամներ՝

Անուշ Բոջուկյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Դատական կարգադրիչների ծառայության կենտրոնական մարմնի ֆինանսաբյուջետային բաժնի ավագ մասնագետ,

Ռուբինա Նազարյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Դատական կարգադրիչների ծառայության կենտրոնական մարմնի անձնակազմի կառավարման բաժնի պետ,

Սարգիս Արմենակյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Գրիգոր Կարապետյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի վերահսկողության բաժնի պետ,

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄԻմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/10-02» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի հուլիսի 28-ին, ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկաների ընդհանուր գները՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գինը /ՀՀ դրամ/
1.	Համազգեստ	20 842 616
2.	Համազգեստ	2 360 000
3.	Վերնաշապիկներ	2 193 000
4.	Վերնաշապիկներ	2 193 000
5.	Վերնաշապիկներ	250 000
6.	Վերնաշապիկներ	250 000

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	**Հասցեն, հեռախոսահամարը**
«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ	ք. Երևան, Դրոյի 8, բն. 4, հեռ. (094) 954995, (010) 776080
«ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ	ք. Երևան, Ավան, Քուչակ 16/2, հեռ. (010) 625911
«ՖԻՐՄԱ ԼԻԴԱ» ՍՊԸ	ք. Երևան, Միրաքյան 56ա, հեռ. (010) 735777

4. Համակարգում 19.07.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

5. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի, «ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ-ի, «ՖԻՐՄԱ ԼԻԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի, «ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ-ի, «ՖԻՐՄԱ ԼԻԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Մասնակիցների առաջարկած գները՝

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ			«ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ			«ՖԻՐՄԱ ԼԻԴԱ» ՍՊԸ		
		Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/
1	Համազգեստ	19 350 000	3 870 000	23 220 000	16 662 500	3 332 500	19 995 000			
2	Համազգեստ	2 125 000	425 000	2 550 000	1 900 000	380 000	2 280 000			
3	Վերնաշապիկներ	1 360 950	272 190	1 633 140	1 193 250	238 650	1 431 900	1 560 900	312 180	1 873 080
4	Վերնաշապիկներ	1 485 650	297 130	1 782 780	1 195 400	239 080	1 434 480	1 750 100	350 020	2 100 120
5	Վերնաշապիկներ	166 500	33 300	199 800	138 750	27 750	166 500	181 500	36 300	217 800
6	Վերնաշապիկներ	181 250	36 250	217 500	140 250	28 050	168 300	203 500	40 700	244 200

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն, «ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ-ն, «ՖԻՐՄԱ ԼԻԴԱ» ՍՊԸ-ն հայտերով ներկայացրել են իրենց կողմից հաստատված հայտարարություն՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ:

8. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ-ին:

3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ին:

1-ին, 2-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակցի ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել համապատասխան հարցումը,

2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016թ. օգոստոսի 03-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

3) ծանուցել 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016թ. օգոստոսի 03-ը ներառյալ, ներկայացնել լրացուցիչ հիմնավորում չհիմնավորված ցածր գնային առաջարկ ներկայացնելու համար. մասնակցի ներկայացրած գինը ցածր է գնման հայտով նախատեսված առավելագույն գների 75 տոկոսից:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

10. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016թ. օգոստոսի 05-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Հարություն Դավթյան

Անդամներ՝ Անուշ Բոջուկյան

Ռուբինա Նազարյան

Գրիգոր Կարապետյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան